ԳԱՌՆԻԻ ԱՆՏԻԿ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Ա. Ա. ՍԱՀԻՆՅԱՆ

Գառնիի անտիկ տաճարի կառուցման ժամանակի վերաբերյալ գոյություն ունեն խիստ տարբեր տեսակետներ։

Հեղինակների մի մասը տաճարի կառուցումը վերագրում է «...կամ առաջին Արտաշեսյանների և կամ Երվանդյանների թագավորության ժամանակաշրջանին»[1]*, այսինքն մ. թ. ա. III—II դդ., մյուսը տաճարի կառուցման ժամանակը համարում է մ. թ. ա. I դարը*[2]*, ոմանք այն դիտում են իբրև մ. թ. I դարի*[3]*, մի մասն էլ՝ II դարի*[4] *կամ՝ II—III դդ.*[5] *և նույնիսկ՝ III—IV դդ. գործ*[6]*։*

Արդ, փորձենք Գառնիի տաճարի հատակագծային և տարածական-ծավալային ամբողջ հորինվածքի հիմքում դրված հոնիական օրդերի ու օրդերային համանման համակարգերի համեմատության, տաճարի ճարտարապետական-կառուցողական արվեստի, հարդարանքի, վիմագրական նյութերի և ժամանակի պատմական իրադարձությունների համատեղ վերլուծության միջոցով քննության առնել այդ հարցը։

Ըստ անտիկ ժամանակաշրջանի ճարտարապետության տեսության մեջ հասած միակ տրակտատի հեղինակ Վիտրուվիոսի (մ. թ. ա. I դար), Գառնիի տաճարի նման «սիստիլ» տիպի տաճարի (ուր միջսյունային հեռավորությու-

---

1 Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 20, 45։

2 Ռ. Լևոնյան, Գառնիի հեթանոսական տաճարի առեղծվածը, «Խորհրդային արվեստ», Երևան, 1940, № 1, էջ 47։

3 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. Ա, Երևան, 1942, էջ 85, 282։ Ն. Բունիաթյան, Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում, Երևան, 1933, էջ 5, 16։ Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, էջ 23։ Н. Г. Буниатов и Ю. С. Яралов, Архитектура Армении, М., 1950, էջ 28։ Б. Н. Аракелян, Раскопки Гарни, «Вестник древней истории», 1951, № 4, էջ 103։ Б. Н. Аракелян, Очерки по истории искусства древней Армении, Ереван, 1976, էջ 27։ В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951, էջ 10։ К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 63—67։ А. Саинян, Гарни и Гегард, М., 1958, էջ 9։ О. Х. Халпахчьян, Архитектура Армении. «Всеобщая история архитектуры», М., 1970, էջ 282։

4 В. Д. Блаватский, Античная архитектура на территории Северного Причерноморья. «Всеобщая история архитектуры», М., 1948, т. 2, кн. 2, էջ 388։ А. И. Болтунова, см. Б. Н. Аракелян, Очерки по истории искусства древней Армении, էջ 27։

5 Н. Я. Марр, Ани, Л.—М., 1934, էջ 49։

6 К. К. Романов, Развалины храма римского типа в Баш-Гарни, см. «Из истории докапиталистических формаций», сборник статей к сорокапятилетию научной деятельности Н. Я. Марра, М.—Л., 1933, էջ 654։ Ш. Амиранашвили, История грузинского искусства, М., 1963, էջ 83։

նը հավասար է 2 մոդուլի) ու «եվստիլ» տիպի տաճարի (ուր միջսյունային հեռավորությունը կազմում է $2^1/_4$ մոդուլ) օրդերների սյուներն ունեն միանման 9,5 մոդուլ բարձրություն[7]։

Քանի որ իտալական վերածննդի ճարտարապետության տեսաբանների հոնիական օրդերի համակարգերում նույնպես վերցված է նույն «եվստիլ» տիպի տաճարի միջսյունային ($2^1/_4$ մոդուլ) հեռավորության չափը, ապա հետաքրքրական է, թե հոնիական օրդերի այդ համակարգերը համաչափական ի՞նչ փոխհարաբերությունների մեջ են Գառնիի և Վիտրուվիոսի ներկայացրած, ինչպես նաև միմյանց օրդերային համակարգերի նկատմամբ։ Ստորև ներկայացնում ենք հոնիական օրդերի մոդուլային այդ համակարգերի համաչափությունների համեմատական աղյուսակը։

	Գառնիի տաճարում[8]	Ըստ Վիտրուվիոսի «եվստիլ» և «դիաստիլ» տիպի տաճարների[9]	Ըստ Ալբերտիի[10]	Ըստ Սեռլիոյի[11]	Ըստ Վինյոլայի[12]	Ըստ Պալլադիոյի[13]	Հռոմի «Ֆորտունա Վիրիլիս» տաճարում (42—38 թթ. մ. թ. ա.)[14]
Միջսյունային հեռավորությունը	2	2; $2^1/_4$	$2^1/_4$	—	$2^1/_4$	$2^1/_4$	$2^1/_4$
Սյան բարձրությունը	9,5	9,5	8	8	9	9	8,7
Խարիսխի բարձրությունը	0,5	0,5	0,5	1/2	1/2	1/2	0,512
Բնի բարձրությունը	8,65	$8^2/_3$	$7^6/_{38}$	$7^1/_6$	$8^1/_6$	$8^7/_{36}$	7,83
Խոյակի բարձրությունը	0,35	1/3	13/18	1/3	1/3	11/36	0,358
Անտաբլեմենտի բարձրութ.	2,375	2,375	2,05	2	$2^1/_4$	$1^4/_5$	2,3
Արխիտրավի բարձրությունը	0,865	0,76	0,615	3/5	5/8	3/5	0,647
Ֆրիզի բարձրությունը	0,46	0,57	0,615	3/5	3/4	9/20	0,48
Արխիտրավի և ֆրիզի բարձրությունը միասին	1,325	1,33	1,23	$1^1/_5$	$1^3/_8$	$1^1/_{20}$	1,127
Քիվի բարձրությունը	1,05	1,045	0,82	4/5	7/8	3/4	1,173
Անտաբլեմենտի բարձրության հարաբերությունը սյան բարձրության նկատմամբ	1/4	1/4	1/3,902	1/4	1/4	1/5	1/3,8

Ինչպես տեսնում ենք, Վինիոլայի մոտ հոնիական օրդերով կառուցված սյունաշարքի միջսյունային հեռավորությունը հավասար է $2^1/_4$ մոդուլի, որը համապատասխանում է Վիտրուվիոսի «եվստիլ» տիպի տաճարի միջսյունա-

[7] Витрувий, Десять книг об архитектуре, М., 1936, кн. 3, гл. 3, 1—7, 10, кн. 4, вступление.

[8] Քանի որ տաճարների պատվանդանի չափերը Վիտրուվիոսի կողմից ցույց չեն տրված (Витрувий, էջ 237, ծան.), մենք պատվանդանի չափերը չենք ներկայացնում։

[9] Витрувий, նշվ. աշխ., գիրք 3, գլ. 3—5, գիրք 4, գլ. 1, էջ 241, 245 ծան., Виньола, Правило пяти ордеров архитектуры, М., 1939, էջ 106—109։

[10] Альберти, Десять книг о зодчестве, М., 1935, кн. 7, гл. 7—9, кн. 9, гл. 7.

[11] Виньола, նշվ. աշխ., էջ 102; Ганс Блюм, V. Colvmnae..., М., 1936, էջ 8։

[12] Виньола, նշվ. աշխ., էջ 19։

[13] А. Палладио, Четыре книги об архитектуре, М., 1936, кн. 1, гл. 16.

[14] Виньола, նշվ. աշխ., էջ 104—105, նկ. 24, 25։

յին հեռավորությանը, սակայն Վիտրուվիոսի «եվստիլ» տաճարի սյան բարձրությունը հավասար է 9,5 մոդուլի, իսկ Վինիոլայի հետազոտությամբ ստացված չափը կազմում է 9 մոդուլ։

Եվ իրավացիորեն նշվում է, որ այդ տարբերության հետևանքով Վինիոլայի մոտ «...միջսյունային հեռավորության բացվածքի հարաբերակցությունը ստացվում է պակաս վայելչակազմ, քան Վիտրուվիոսի մոտ, այդ իսկ պատճառով վիտրուվիոսական «եվստիլ» բացվածքի համեմատությամբ այն ինչ-որ չափով կորցնում է իր թեթևությունը և նրբագեղությունը»[15]։

Այդ երևույթը ևս ավելի ակնհայտ է Պալլադիոյի մոտ։ Անդրադառնալով իր ուսումնասիրություններին, նա գրում է. «Յուրաքանչյուր օրդերի չափագրությունը ես ներկայացնում եմ... ոչ այնքան ելնելով Վիտրուվիոսի խրատներից, որքան ղեկավարվելով հին կառուցվածքների սեփական դիտումներով»[16]։

Պալլադիոն նույնպես հոնիական օրդերի սյունաշարքի սյուների միջսյունային հեռավորությունն ընդունում է Վիտրուվիոսի «եվստիլ» տիպի տաճարի միջսյունային հեռավորության $2^1/_4$ մոդուլ չափը և սյան բարձրությունը, Վիտրուվիոսի հիշատակած 9,5 մոդուլի փոխարեն, ցույց է տալիս 9 մոդուլ։ Ավելին, Պալլադիոն փոխում է նաև անտաբլեմենտի և սյան բարձրության հարաբերությունը ($^1/_4$-ի փոխարեն դարձնում է $^1/_5$), դրանով իսկ փոքրացնելով անտաբլեմենտի ու նրա առանձին մասերի մոդուլային արտահայտության բացարձակ չափերը, ավելի է հեռանում վիտրուվիոսական կանոնիկ չափերից։

Ալբերտին է՛լ ավելի է հեռանում հոնիական օրդերի վիտրուվիոսական կանոնիկ համակարգից։ Հոնիական օրդերի սյուների միջսյունային հեռավորության համար ընդունելով դարձյալ՝ $2^1/_4$ մոդուլ չափը, սյան բարձրությունը Վիտրուվիոսի «եվստիլ» տաճարի սյան բարձրության 9,5 մոդուլից իջեցնում է 8 մոդուլի։

Եվ չնայած պահպանվում է անտաբլեմենտի և սյան բարձրության վիտրուվիոսական $^1/_4$ հարաբերությունը, սակայն զգալիորեն կարճանում է սյան բնի բարձրությունը և համապատասխանաբար նվազում են անտաբլեմենտի մասերի մոդուլային արտահայտությունների բացարձակ չափերը։

Համանման պատկեր գոյություն ունի Սեռլիոյի հոնիական օրդերի համաչափական համակարգում։ Ընդ որում, ուշագրավ է, որ այդ հեղինակների մոտ օրդերի առանձին մասերի մոդուլային արտահայտությունները ակնհայտ նման են միմյանց։

Այսպես, արխիտրավի բարձրությունը Ալբերտիի մոտ հավասար է 0,615 մոդուլի, Սեռլիոյի մոտ՝ 0,60, Վինիոլայի մոտ՝ 0,625, Պալլադիոյի մոտ՝ 0,60 մոդուլի։

Քիվի բարձրությունը Ալբերտիի մոտ հավասար է 0,82 մոդուլի, Սեռլիոյի մոտ՝ 0,80, Վինիոլայի մոտ՝ 0,87, Պալլադիոյի մոտ՝ 0,75 մոդուլի։

Նշանակում է ետվիտրուվիոսական ժամանակաշրջանի հուշարձանների հոնիական օրդերի առանձին մասերի միջև գոյություն ունեցած համաչափա-

---

15 Виньола, նշվ. աշխ., էջ 106, ծան.։

16 А. Палладио, նշվ. աշխ., գիրք 1, գլ. 12, էջ 24։

կան որոշակի օրինաչափությունը տարբեր հետազոտողների հանգեցրել է միանման եզրակացություններին։

Այդ բոլոր հեղինակները հավաստում են, որ իրենց աշխատանքներում հենվել են ոչ միայն Վիտրուվիոսի, այլև առավել մեծ չափով անտիկ շրջանի հուշարձանների սեփական չափագրությունների ու մանրազնին ուսումնասիրությունների վրա։



Նկ. 1

1. Գառնիի անտիկ տաճարը, 2. «սիստիլ» տիպի տաճար. ըստ Վիտրուվիոսի, 3. «եվստիլ» տիպի տաճար. ըստ Վիտրուվիոսի, 4. ըստ Վինիոլայի, 5. ըստ Պալլադիոյի, 6. ըստ Ալբերտիի, 7. ըստ Սելիոյի։

Հետևապես, ըստ այդ ուսումնասիրությունների, ավելի քան երեք դար ընդգրկող եվրոպական ժամանակաշրջանի հուշարձանների օրդերային համակարգը, մինչ մ. թ. ա. I դարը ստեղծված կառուցվածքների օրդերային համակարգից ակնառու տարբերություն ունենալով (սյուների միանման տրամագծի և միանման միջսյունային հեռավորության դեպքում ավելի կարճ սյուն, հետևապես՝ սյունաշարքի միջսյունային հեռավորության բացվածքի ավելի ցածր համաչափություն, սյան նույն տրամագծի առկայության դեպքում անհամեմատ ցածր անտաբլեմենտ, անտաբլեմենտի որոշ մասերի մոդուլային արտահայտության փոքր չափեր և այլն), հիմք է դարձել վիտրուվիոսական օրդերի առանձին մասերի՝ կանոնիկ համաչափությունից հեռանալու համար։

Մինչդեռ ինչպես ցույց է տալիս վերը ներկայացված աղյուսակը, գրեթե հար և նման են Գառնիի տաճարի և Վիտրուվիոսի հոնիական օրդերի համակարգերը[17]։

Այժմ փորձենք կատարել տաճարների կառուցվածքի Վիտրուվիոսի տեսության և Գառնիի ու նույնանման առանձին հուշարձանների ճարտարապետական-կոնստրուկտիվ հիմնական մասերի համեմատական վերլուծություն։

Այս համեմատությունների ժամանակ նպատակ չունենք հիշատակելու

17 Նկատելի ընդհանրություն գոյություն ունի նաև Վիտրուվիոսի և նրա ժամանակաշրջանին մոտ ստեղծված հուշարձանների միջև (Հռոմի Ֆորտունա Վիրիլիս կոչվող տաճարը, մ. թ. ա. 42—38 թթ.։ Թերես Մարցելոյի թատրոնի կառուցվածքը, մ. թ. ա. 11 թ.։ Վերջինի մասին տե՛ս Виньола, նշվ. աշխ., էջ 107, նկ. 26, Дегодэ-ի չափագրությունը)։ Ինչպես նշվեց, Վիտրուվիոսը տաճարների պատվանդանի (պոդիումի) չափերը չի հիշատակում. ուշագրավ է, որ Գառնիի պատվանդանն իր մանրամասների համաչափություններով նման է Վիտրուվիոսի ժամանակաշրջանի գործ հանդիսացող Ֆորտունա Վիրիլիսի տաճարի պատվանդանին (տե՛ս Виньола, նշվ. աշխ., էջ 104—105, նկ. 24, 25).

Գառնիի տաճարի բնույթի բոլոր հուշարձանները. մեր նպատակն է միայն ցույց տալ այդ կարգի հուշարձանների կամ ճարտարապետական կոնստրուկտիվ առանձին ձևերի գոյությունը նշված ժամանակամիջոցում։

1. Վիտրուվիոսը տաճարների արտաքին սյունաշարքի խարիսխների տեղադրման մասին գրում է, որ նրանք դրվում են պատվանդանի քիվի վերևից ընթացող ստիլոբատի վրա. «Стилобат же следует выравнивать так, чтобы у него в середине было добавление при помощи непарных уступов, ибо если его выводить по уровню, он будет казаться глазу вогнутым»[18].

Գառնիում նույնպես պատվանդանի քիվին անմիջապես հաջորդում է աստիճան, որի վրա տեղադրված են խարիսխները, իսկ այդ աստիճանի երկայնական ուղղության վերին եզրն ունի կուրվատուրային երևույթ ներկայացնող ճիշտ այնպիսի կորություն, որպիսին նշում է Վիտրուվիոսը[19]։

Նույն պատկերը առկա է Նիմի տաճարում (կառուցված մ. թ. ա. 20—19 թթ.) որի մասին Պալլադիոն գրում է. «...над карнизом пьедестала имеются две ступени, поддерживающие базу колонн, и весьма возможно, что *Витрувий подразумевал именно эти ступени,* когда говорил..., что, делая парапет кругом храма, нужно ставить базы колонн на неравные цоколи (Scamilli impares), которые должны быть на одном отвесе с телом пьедестала... Это место дало повод многочисленным рассуждениям»[20].

Ուրեմն Գառնիի տաճարի պատվանդանի կառուցվածքն ունի այն ձևը, որպիսին նշում է Վիտրուվիոսը և որպիսին ունի Վիտրուվիոսին մոտ ժամանակաշրջանում (մ. թ. ա. I դարի երկրորդ կեսին) ստեղծված հուշարձանը։

2. Գառնիի տաճարում սյան խարիսխն ունի 0,5 մոդուլ բարձրություն, իսկ տեսքը ատտիկական է։

Վիտրուվիոսի մոտ հոնիական սյան խարիսխի բարձրությունը նույնն է. իսկ խարիսխի ձևը՝ ատտիկական կամ հոնիական[21]։

Ատտիկական խարիսխներ ունեն տարբեր ժամանակաշրջանի բազմաթիվ հուշարձաններ և մեզ հետաքրքրող ժամանակահատվածից՝ ինչպես մ. թ. ա. I դարի երկրորդ կեսի (Ֆորտունա Վիրիլիսի[22], Մարցելլոյի թատրոնի շենքը[23]), այնպես էլ մ. թ. I դարի շատ կառուցվածքներ (Սագալասսոսի տաճարը[24] և այլն)։

3. Գառնիի սյունների խարիսխների ներքնասալի չափը հավասար է երկու սյունների խարիսխների ներքնասալերի միջև եղած հեռավորությանը։

---

18 Витрувий, նշվ. աշխ., գիրք 3, գլ. 4, էջ 72։

19 Տե՛ս А. Саняи, Теория Витрувия о строении храмов и античный храм в Гарни, Ереван, 1978, էջ 6—8։

20 А. Палладио, նշվ. աշխ., գիրք 4, գլ. 28, էջ 112, էջ 114 գծագիրը։

21 Витрувий, նշվ. աշխ., գիրք 3, գլ. 5, էջ 72, 288, նկ. 25, 1։ Виньола, նշվ. աշխ., էջ 113։

22 Палладио, նշվ. աշխ., գիրք 4, գլ. 13, էջ 49, ուր Ֆորտունա Վիրիլիսի մասին նշվում է. «База—аттическая, хотя, казалось бы она должна была быть ионической, как и капители, однако не встречается ни одной постройки, в которой древние пользовались бы ионической базой, описанной Витрувием». Տե՛ս նաև Виньола, նշվ. աշխ., էջ 104, նկ. 24։

23 В. Д. Блаватский, Архитектура древнего Рима, М., 1938, էջ 44։

24 К. В. Тревер, Очерки..., էջ 52։

Այդպիսի չափ է սահմանվում «սիստիլ» տաճարի համար նաև Վիտրուվիոսի մոտ[25]։

4. Գառնիի տաճարի սյան խարիսխը հատակին հպվում է ոչ թե ներքնասալի ամբողջ մակերեսով, այլ միայն սյան կորության ուղղությամբ, այդ կորագիծ միջուկի և նրա շրջապատի միջև թողնելով 1—1,5 սանտիմետր բարձրությամբ դատարկ տարածություն։

Այդպես է նաև Տիբուրի Սիբիլլիի տաճարում (մ. թ. ա. I դարի սկիզբ)[26]։

5. Գառնիում սյունաշարքի սյուների ներքևից հաշված 1/3 բարձրության վրա տրամագիծը հավասար է 0,704 մետրի, իսկ անկյունային սյուներինը՝ 0,7125, 0,713, 0,7165, 0,719 մմ։

Վիտրուվիոսը հաղորդում է. «Անկյունային սյուները պետք է մյուսներից հաստ անել իրենց սեփական տրամագծի հիսուներորդ մասի չափով[27]։

Այդպիսի փոխհարաբերություն գոյություն ունի նաև Գառնիում. (0,704:50=0,014; 0,704+0,014=0,718 մ)։

6. Գառնիի տաճարի սյուների խոյակի մանրամասների չափերը (խոյակի բարձրության, աբակի լայնության ու երկարության և այլն) հավասար են Վիտրուվիոսի նշած հոնիական խոյակի չափերին[28], իսկ խոյակն իր ճակատների մշակումով (միջվոլյուտային տարածության մեջ երեք գորելիեֆ իոնիկներ, վերջինների եզրային իոնիկների վրա սփռված՝ վոլյուտաների վերևից իջնող երեք տերևներ, կենտրոնական իոնիկի երկու կողմերում թեթևակիորեն դեպի ներս թեքված սլաքներ, բարձիկների զարդաքանդակման բնույթ ու զարդաքանդակների տեսք, աբակի պրոֆիլի ձև և համաչափություն) հար և նման է Ֆորտունա Վիրիլիսի[29] և Սագալասսոսի[30] վերը հիշատակված տաճարների խոյակներին։

Միանման հորինվածք ունեն նաև նույն ժամանակահատվածի հոնիական օրդերի անկյունային խոյակները. Գառնիի խոյակը նման է ինչպես Հռոմի Ֆորտունա Վիրիլիսի[31], այնպես էլ փոքրասիական կառուցվածքներից Թելմեսսոսի (I դար)[32] և Պերգամոնի «հոնիական տաճարի»[33] անկյունային խոյակներին։

7. Գառնիի սյան բնի դեպի վեր նեղացումը (էնտազիսը) այնպես է կատարված, որ ներքևի տրամագիծը դեպի վեր աստիճանաբար մեծանում է, իսկ բարձրության 1/3-ից սկսած նորից պակասելով, սյան վերին ծայրում դառնում է ներքևի տրամագծից փոքր։ Այսինքն սյունն իր բարձրության միջին հատվածում ունի համեմատաբար մեծ հաստություն։

---

25 Витрувий, նշվ. աշխ., գիրք 3, գլ. 3, էջ 68։

26 «Всеобщая история архитектуры», т. 2, էջ 480։

27 Витрувий, նշվ. աշխ., գիրք 3, գլ. 3, էջ 70։

28 Витрувий, նշվ. աշխ., գիրք 3, գլ. 5, էջ 73, գիրք 4, գլ. 1, էջ 77։

29 С. А. Кауфман, Архитектура Римской республики, «Всеобщая история архитектуры», т. 2, кн. 2, էջ 95, նկ. 60։

30 Ch. Lanckoronski, G. Niemann et E. Petersen, Les villes de la Pamphylie et de la Pisidie, vol. 2, Paris, 1893, էջ 157, նկ. 123, տախտ. XXV; К. В. Тревер, Очерки..., էջ 51—53, նկ. 9։

31 А. Палладио, նշվ. աշխ., գիրք 4, գլ. 13, էջ 52։

32 Ch. Lanckoronski.., նշվ. աշխ., էջ 85, նկ. 32։ К. В. Тревер, Очерки..., էջ 53։

33 „Königliche Muséen zu Berlin, Altertümer von Pergamon...", Berlin, MDCCCXCVI, B. IV, Tafeln, տախտ. XXXIV.

Վիտրուվիոսն այդ մասին գրում է. «Что же касается того добавления с средней части колонн..., то в конце книги даны будут его чертежи и вычисление, каким образом делать его плавным и подобающим»[34].

Վիտրուվիոսի վերոհիշյալ հաղորդման վերաբերյալ հիշատակություն ունի նաև Պալլադիոն։ Նա գրում է. «Բոլոր օրդերների սյուները պետք է այնպես անել, որ վերին մասում նրանք լինեն բարակ, քան ներքևում և մեջտեղում ունենան ոչ մեծ հաստացում». և ապա անդրադառնալով Վիտրուվիոսին, գրում է. «Սակայն ինչպե՞ս կատարել միջին մասի այդ հաստացումը, մենք նրա մոտ ոչինչ չենք գտնում, բացի... խոստումից»[35]։

Ինչպես տեսանք, Գառնիի տաճարի սյունն ունի ճիշտ այդպիսի կառուցվածք։ Այդպիսի կառուցվածք ունեն նաև Տիբուրի Սիբիլլի տաճարի (մ. թ. ա. I դարի սկիզբ)[36] սյունը, Բաալբեկի Բաքոսի տաճարի (II դար) սյունը[37] և այլն։

8. Գառնիի տաճարի անտաբլեմենտի ֆրիզը ծածկված է ականթի տերևներով մշակված ալիքաձև զարդաքանդակներով։

Այդ բնույթի (առանձին մանրամասների որոշ տարբերությամբ) ֆրիզներ գոյություն ունեն շատ երկրների տարբեր ժամանակներում ստեղծված կառույցներում, որոնցից ուշագրավ են՝ Նեմաուզի (Սիմ, Գաղիա) այսպես կոչվող Մեզոն Կարրեի («Maison Carree») տաճարի (20—19 թթ. մ. թ. ա.) անտաբլեմենտի ֆրիզը[38], Բաալբեկի Յուպիտերի տաճարի (I դար) ճակատնի երկթեք լանջի քիվի ներքևի մասի ֆրիզը[39], Պոլայի (այժմյան Պուլ, Հարավսլավիա) օգոստոսյան ժամանակաշրջանի գործ համարվող[40] «Օգոստոսի տաճարի» անտաբլեմենտի ֆրիզը[41], Սագալլասսոսի (Պիսիդիա, Փոքր Ասիա) թատրոնական շենքի բեմի (скене) կենտրոնական դռան սանդրիկի ֆրիզը (I դարի վերջ կամ II դարի սկիզբ)[42], Բաալբեկի Բաքոսի տաճարի (II դար) ցելլայի և նախամուտքի ֆրիզը[43], Ասպենդոսի (Պամֆիլիա, Փոքր Ասիա)

---

34 Витрувий, նշվ. աշխ., գիրք 3, գլ. 3, էջ 71։

35 А. Палладио, նշվ. աշխ., գիրք 1, գլ. 13, էջ 25։

36 H. D'Espouy, Fragments d'architecture antique. Paris, vol. 2, տախտ. 44։ Սիբիլլիի տաճարի օրդերը կորնթական է. Վիտրուվիոսը կորնթական օրդերի սյուների մասին գրում է. «Коринфские колонны, за исключением их капителей, во всей своей соразмерности подобны ионийским» (кн. 4, гл. 1, էջ 77)։

37 D. Krencker, T. von Lupke, H. Winnefeld, Baalbek, Ergebnisse, der Ausgrabungen und Untersuchungen in den Jahren 1898 bis 1905, B. 2, Berlin und Leipzig, 1923, էջ 4, նկ. 6։

38 „Empire romain", texte par Gilbert Picard, office du Livre, Fribourg, 1965, էջ 75—77։ Палладио, նշվ. աշխ., գիրք 4, գլ. 28, էջ 114—115։ Ըստ էության նույն մոտիվն ունի Հռոմի Կեսարի Ֆորումի (մ. թ. ա. 54—46 թթ.) Վեներայի տաճարի կորնթական օրդերի ֆրիզը. տե՛ս «Всеобщая история архитектуры», т. 2, 1973, էջ 435, նկ. 19։

39 B. Schulz, und H. Winnefeld, Baalbek, Ergebnisse der Ausgrabungen und Untersuchungen, in der Jahren 1898 bis 1905, B. 1, Berlin und Leipzig, 1921, էջ 63, նկ. 34, տախտ. 22, 62։

40 В. Д. Блаватский, Архитектура древнего Рима, էջ 12։

41 А. Палладио, նշվ. աշխ., գիրք 4, գլ. 27, էջ 108, 111։

42 Ch. Lanckoronski..., նշվ. աշխ., հատ. 2, էջ 165, նկ. 135։ К. В. Тревер, Очерки..., էջ 55։

43 D. Krencker..., նշվ. աշխ., հատ. 2, էջ 14, նկ. 26, էջ 15, նկ. 27, տախտ. 18, 21։

թատրոնական շենքի (II դար) բեմի անտաբլեմենտի ֆրիզը[44], Միլետի մ. թ. ա. II դարում կառուցված հարավային շուկայի[45] հետագայում (II դար) ավելացված հյուսիսային մուտքի[46] անտաբլեմենտի ֆրիզը[47], Ասպենդոսի Նիմֆեոնի անտաբլեմենտի ֆրիզը[48], Ադալիայի (Պամֆիլիա, Փոքր Ասիա) Ադրիանոսի կամարի անտաբլեմենտի ֆրիզը[49], Խերսոնեսի հելլենիստական շրջանի հոնիական օրդերի անտաբլեմենտի ֆրիզը[50] և այլն։

Նշանակում է, Գառնիի տաճարի ֆրիզի՝ ականթի տերևներով ալիքաձև մշակված հորինվածքը գոյություն է ունեցել առնվազն մ. թ. ա. I դարից։

Այդ ֆրիզների հորինվածքները թեև միանման են, սակայն նրանց մշակման ու առանձին մանրամասների միմյանց նկատմամբ ունեցած համաչափությունների միջև կա որոշակի տարբերություն։ Մի մասում զարդաքանդակները ծածկում են ֆրիզի գրեթե ամբողջ դաշտը, ականթի տերևները քանդակված են ավելի ազատ, փարթամ ճյուղավորությամբ, գալարներն ունեն մեծ շառավիղ, իսկ նրանց մեջ ներգծված վարդյակները և ծաղիկները գալարների համեմատությամբ՝ փոքր չափեր (Մեղոն Կարրե, Պոլայի «Օգոստոսի տաճար», Բաալբեկի Յուպիտերի տաճար, Գառնիի տաճար, Սագալասսոսի թատրոնական շենքի սանդրիկ և այլն), իսկ մյուս մասում ականթի տերևները համեմատաբար շոր են քանդակված ու բարակիկ, ալիքների մեջ ներգծված ծաղիկները՝ խոշոր, ծաղիկների թերթիկները՝ սրածայր ու մշակումով մանրացված (Միլետի հարավային շուկայի հյուսիսային մուտք, Բաալբեկի մեծ տաճարի բակի սյունաշարքի (Altariiof) անտաբլեմենտի ֆրիզ և այլն)։ և եթե վերջինների մոտ ֆրիզի վերևից Գառնիի նման ընթանում է իոնիկների շարք, ապա իոնիկների միջև քանդակված սլաքները նեղ են ու փոքր, իոնիկները՝ միմյանց շատ մոտ (Միլետի հարավային շուկայի հյուսիսային մուտք և այլն)։

Ինչպես տեսնում ենք, Գառնիի տաճարի ֆրիզը մտնում է առաջին խմբի մեջ, հարում համեմատաբար ավելի հնագույն (մ. թ. ա. I դար—մ. թ. II դարի սկիզբ) հուշարձաններին[51]։

---

44 K. G. Lanckoronski, Städte Pamphyliens und Pisidiens, Wien, 1890, B. I, էջ 112, նկ. 87։

45 H. Knackfuss, Milet, Ergebnisse der Ausgrabungen und Untersuchungen Seit dem Jahre 1899, von T. Wiegend. Der Sud Markt und die Benachbarten Bauanlagen, Berlin, 1924, B. 1, Heft 7, էջ 46։

46 «Всеобщая история архитектуры», М., 1948, т. 2, кн. 2, տախտ. 72։

47 H. Knackfuss, նշվ. աշխ., էջ 98, նկ. 89, էջ 99, նկ. 90, 91, էջ 100, նկ. 92, 93, էջ 101, նկ. 94 և այլն։

48 K. G. Lankoronski, Städte Pamphyliens und Pisidiens, B. 1, էջ 100, նկ. 78։

49 Նույն տեղում, տախտակ VII։

50 Н. П. Сорокина, Архитектура античных государств Северного Причерноморья, «Всеобщая история архитектуры», т. 2, М., 1973, гл. 6, էջ 371, նկ. 11 б.

51 Սակայն Գառնիի ֆրիզն իր առանձնահատկություններով հանդերձ (ականթի կորագիծ վերջավորությամբ հյութեղ տերևներ, ֆրիզի դաշտը ծածկող մեծ խորության քանդակներ, տարբեր վարդյակների և միևնույն ականթի տերևի բաղմապիսի համակցություններ, որձաքարի վրա վիրտուոզ կատարելության հասած վարպետություն) որոշակիորեն մտնում է I և II դդ. ստեղծված փոքրասիական և սիրիական համանման զարդաքանդակների շրջանակի մեջ։ Այդ մասին տե՛ս К. В. Тревер, Оречки..., էջ 55։ К. К. Романов, Развалины храма







Նկ. 2

1. Գառնի. անտիկ տաճար. ֆրիզի բեկոր, 2. Նիմ. անտիկ տաճար, մ. թ. ա. 20—19 թթ., ֆրիզի բեկոր, 3. Բաալբեկ. Հուպիտերի տաճար. I դար, ֆրիզի բեկոր։

9. Գառնիի տաճարի անտաբլեմենտի ֆրիզի քարերը շարված են սեպաձև բարավորի սկզբունքով. մեկական քար դրված է սյան ուղղաձիգ առանցքի ուղղությամբ անմիջապես արխիտրավի վրա, իսկ այդ երկու քարի արանքում ագուցված է շեղ կտրվածք ունեցող փականի քար։ Փականի քարի և արխիտրավի միջև թողնված է 2—3 սանտիմետր դատարկ տարածություն, որպեսզի արխիտրավների վրա եկող բեռը փոխանցվի սյուներին։

Այդպիսի կառուցվածք ունեն Հռոմի ֆորումի Կաստորի և Պոլլուկսի (կամ Դիոսկուրի) տաճարի ֆրիզը (մ. թ. 6 թ.)[52], Բաալբեկի Յուպիտերի տաճարի սյունաշարքի ֆրիզը[53] (I դար), Պալմիրայի Բելի տաճարի (կառուցված I դարում) շրջապատի սյունաշարքի ֆրիզը (II դար)[54]։ Այդ կոնստրուկցիան հանդիպում է Հռոմի Յուպիտեր Ստատորի տաճարի ֆրիզում, Պոլայի (Դալմացիա) ամֆիթատրոնի շենքում (մ. թ. ա. I դար)[55] և այլն։

10. Գառնիի տաճարի ֆրիզի արտաքին մակերեսը դեպի դուրս ուռուցիկ է[56]. այդպիսի ձև ունեն Հռոմի Վեստայի (այսպես կոչվող «եղների ֆորումի»—«Foro Boario») տաճարի ֆրիզը (մ. թ. ա. I դար)[57], Սադալասսոսի (Փոքր Ասիա) «հոնիական տաճարի» ֆրիզը[58] (I դարի երկրորդ կես)[59], Պալմիրայի Բելի տաճարի սյունաշարքի ֆրիզը (I դար)[60], Բաալբեկի Բաքոսի տաճարի ֆրիզը (II դար)[61], Միլետի հարավային շուկային հետագայում ավելացված մուտքի (II դար) ներքևի հարկի սյունաշարքի ֆրիզը[62] և տարբեր ժամանակների բազմաթիվ այլ կառույցների ֆրիզներ[63]։

11. Գառնիի տաճարի արխիտրավների սոֆիտները ունեն բազմազան զարդաքանդակներ. այդ բնույթի սոֆիտներ ունեն Թերմեսոսի տաճարը (I դար)[64], Պերգամոնի «Theater—Terrasse»-ի կոմպլեքսում գտնվող «հո-

---

Римского типа в Баш-Гарни..., էջ 650։ Ն. Բունիաթյան, նշվ. աշխ., էջ 11։ Ըստ պրոֆ. Ն. Բունիաթյանի Գառնիի ֆրիզի «...կոմպոզիցիան համարվում է լավագույնը և վերաբերում է Օգոստոսի ժամանակաշրջանին (նույն տեղում, էջ 9)։

52 John B. Ward-Pirkins, Architettura Romana, Venezia, 1974, էջ 67, նկ. 80, «Всеобщая история архитектуры», т. 2, М., 1973, էջ 527, նկ. 38։

53 Schulz and H. Winnefeld, նշվ. աշխ., հատ. 1, էջ 61, նկ. 32։

54 Казимеж Михаловский, Пальмира, Варшава, 1968, նկ. 17 և հտ.։

55 Огюст Шуази, Строительное искусство древних римлян, М., 1938, էջ 105։ «Всеобщая история архитектуры», т. 2, М., 1973, էջ 587։

56 Տե՛ս К. К. Романов, Развалины храма римского типа в Баш-Гарни..., էջ 642, նկ. 3։

57 А. Палладио, նշվ. աշխ., գիրք 4, գլ. 14, էջ 55։

58 Ch. Lanckoronski..., նշվ. աշխ., հատ. 2, էջ 157, նկ. 123։

59 К. В. Тревер, Очерки..., էջ 51։

60 „Palmyra, Ergebnisse der Expeditionen von 1902 und 1917", herausgegeben von Theodor Wiegand, Berlin, 1932, Tafelband, տախտ. 69։

61 D. Krencker..., նշվ. աշխ., հատ. 2, տախտ. 8։

62 H. Knackfuss, Milet..., Der Sud Markt und die Benachbarten Bauanlagen, B. 1, Berlin, 1924, Heft 7, տախտ. XI։

63 C. H. Kraeling, Gerasa City of the Decapolis..., New-Hawen, 1938, Plan V (Triumphale Arch); Monumenta Asiae Minoris, Antiqua, vol. 3... herausgegeben von Josef Keil und Adolf Wilhelm, The Manchester University Press, 1931, էջ 55, նկ 83 (Uzundja Burdj: Detail-aufnahmen von Tychalon nach Herzfeld) և այլն։

64 Ch. Lankoronski..., նշվ. աշխ., հատ. 2, էջ 85, նկ. 32։ К. В. Тревер, Очерки..., էջ 50—51։

նիական տաճարը»[65], Բաալբեկի Բաքոսի տաճարը (II դար)[66], Միլետի հարավային շուկայի հյուսիսային շքամուտքը (II դար)[67] և այլն։

12. Գառնիի տաճարի սյունասրահի առաստաղը մշակված է քառանկյունի, ռոմբաձև և ութանկյունի քանդակազարդ կեսոններով. զարդաքանդակները բազմազան են։

Կեսոններով առաստաղներ հայտնի են հեռավոր անցյալից. Էպիդավրոսի Ֆոլոսի միանման զարդաքանդակներով մշակված շքեղ առաստաղը (մ. թ. ա. IV դար) և շատ ուրիշներ, Գառնիի տաճարին ժամանակով համեմատաբար մոտ Տիբուրի Սիբիլլիի տաճարի սյունասրահի միանման զարդաքանդակներով ստեղծված կեսոնազարդ առաստաղը (մ. թ. ա. I դար)[68], Հռոմի Օգոստոսի ֆորումի Մարս Ուլտորի տաճարի սյունասրահի առաստաղը (մ. թ. ա. 2 թ.)[69], Հռոմի Տիտոսի կամարը (I դար)[70], Բաալբեկի Բաքոսի տաճարի սյունասրահի բազմազան զարդամոտիվներ ունեցող առաստաղը (II դար)[71], Ադալիայի (Փոքր Ասիա) Ադրիանոսի բազմազան քանդակներով մշակված կեսոնազարդ կամարը[72], Միլետի հարավային շուկայի բազմազան զարդաքանդակներ ունեցող կեսոնազարդ մուտքը (II դար)[73] և այլ հուշարձաններ։

Գառնիի տաճարի առաստաղի մշակումը եթե սովելի հնագույն հուշարձաններից (Տիբուրի Սիբիլլիի տաճար մ. թ. ա. I դար) տարբերվում է նրանով, որ այնտեղ կեսոններն ունեն միանման զարդաքանդակներ, ապա II դարի հուշարձաններից, որտեղ կեսոնների զարդաքանդակները մշակված են բազմատեսակությամբ (Բաքոսի տաճար, Միլետի հարավային շուկայի մուտք և այլն), տարբերվում է կամ կեսոնների դասավորությամբ ու գծանկարով, կեսոնների ներսում և դրսում տեղ գտած զարդաքանդակների մշակումով[74] (Բաքոսի տաճար), կամ կեսոնների համակցությամբ, նրանց զարդամոտիվների տեղադրման ընդհանուր հորինվածքով ու քանդակների ոչ շատ մեծ խորությամբ (Միլետի հարավային շուկայի մուտք և այլն)։

13. Վիտրուվիոսը հաղորդում է, որ տաճարների մուտքի բացվածքներն ու նրանց պարակալները դեպի վեր նեղանում են (էնտազիս)։ Այդպիսի կա-

---

[65] „Konigliche Museen zu Berlin, Altertümer von Pergamon, Die Theater-Terrasse", text, Berlin, MDCCCXCVI, B. 4, տախտ. 34։

[66] D. Krencker..., նշվ. աշխ., հատ. 2, տախտ. 34, 41։

[67] H. Knackfuss, Milet, Ergebnisse der Ausgrabungen..., B. I, Heft 7, էջ 127, նկ. 134։ Տե՛ս նաև հարավային շուկայի հյուսիս-արևելյան մասում գտնվող Պրոպիլեումի անտաբլեմենտի արխիտրավները (նույն տեղում, էջ 250, նկ. 253)։

[68] «Всеобщая история архитектуры», т. 2, М., 1973, էջ 275, նկ. 9, էջ 441, նկ. 28։

[69] John B. Ward-Perkins, նշվ. աշխ., էջ 72։

[70] В. Д. Блаватский, Архитектура древнего Рима, էջ 16—17, 61։

[71] D. Krencker..., նշվ. աշխ., հատ. 2, տախտ. 41։

[72] K. G. Lanckoronski, նշվ. աշխ., հատ. 1, տախտ. 8։

[73] H. Knackfuss, Milet..., B. I, Heft 7, էջ 105, նկ. 100, էջ 109, նկ. 106 և այլն։

[74] Պրոֆ. Կ. Տրևերը, որը Գառնիի տաճարը համարում է I դարի գործ, անդրադառնալով այդ հարցին գրում է. «...на гарнийском храме... кессоны, по сравнению, например, с несколько более поздними по времени кессонами, украшавшими храм Асклепия в Пергаме и арку Адриана в Атталее (Памфилия, Малая Азия), отличаются своей формой (ромбы и восьмиугольники) и богатейшим и разнообразным использованием растительных мотивов...» (տե՛ս «Очерки...», էջ 57)։

ռուցվածք ունի Գառնիի տաճարի մուտքի բացվածքը և նրա պարակալը, ուր գրեթե բոլոր չափերը հար և նման են Վիտրուվիոսի նշած այսպես կոչվող «ատտիկական» մուտքի բացվածքի համապատասխան չափերին[75]։

Դեպի վեր նեղացում ունեն նաև Տիբուրի Սիբիլլիի տաճարի (մ. թ. ա. I դարի սկիզբ) մուտքի բացվածքը[76], Բաալբեկի Բաքոսի տաճարի ցելլայի մուտքի բացվածքը[77]։

14. Գառնիի տաճարի ճակտոնի եռանկյան բարձրությունը հիմքի նկատմամբ ունի $^1/_5$ հարաբերություն, այդպիսի հարաբերություն ունեն Մեղոն Կարրեի տաճարի ճակտոնը (մ. թ. ա. 20—19 թթ.)[78], Սագալասսոսի (Պիսիդիա, Փոքր Ասիա) տաճարի ճակտոնը (I դարի երկրորդ կես)[79], փոքր տարբերությամբ ($^1/_{4,4}$), Ֆորտունա Վիրիլիսի տաճարի ճակտոնը (մ. թ. ա. 42—38 թթ.)։

15. Գառնիի տաճարի ինչպես կենտրոնական, այնպես էլ անկյունային ակրոտերիաներն ունեն ականթի տերևներով հարուստ մշակում. համանման մշակում ունեն Բաալբեկի Յուպիտերի տաճարի (I դար) անկյունային ակրոտերիան[80], Պերգամոնի (Փոքր Ասիա) Տրայանեումի «հոնիական տաճարի» ակրոտերիաները[81]։

16. Գառնիի տաճարի նախամուտքը և աղոթասրահը (ցելլան) ունեն սեպաձև քարակերտ թաղակապ ծածկ։

Թաղային կոնստրուկցիաների իրականացումը սկսվել է շատ հեռավոր ժամանակներից։ Հայտնի են Բաբելոնի թաղակապ դահլիճները (Նաբուգոդոնոսորի գահադահլիճը, մ. թ. ա. VI դար և այլն)։ Իրանում կիսաշրջանաձև աղյուսաշեն թաղակապ ծածկ ենթադրվում է դեռևս Աքեմենյան շրջանից։ Նոշի միջնաբերդի Արտաքսերքսես II Մնեմոնի (մ. թ. ա. 405—359 թթ.) վերականգնած պալատական շենքում[82]։

Աղյուսաշեն թաղակապ ծածկեր ունեն պարթևական ժամանակներից։ Աշշուրի պալատի առանձին սենյակներ և միջանցքներ (I դար), Կուիի-Խոջայի պալատի պարթևական շրջանի սենյակները, Հատրայի պալատի (II դար) կոմպլեքսի կառուցվածքները[83] և այլն։

Թաղակիր կառուցվածքները մեծ տարածում էին գտել Առաջավոր Ասիայում։ Հելլենիստական շրջանից հայտնի են Պերգամոնում՝ այսպես կոչված

---

[75] Витрувий, նշվ. աշխ., գիրք 4, գլ. 6։

[76] John B. Ward-Perkins, նշվ. աշխ., էջ 55—56, նկ. 61—63, А. Палладио, նշվ. աշխ., գիրք 4, գլ. 23։

[77] D. Krencker..., նշվ. աշխ., հատ. 2, տախտ. 7։

[78] А. Палладио, նշվ. աշխ., գիրք 4, գլ. 28, էջ 114։

[79] К. В. Тревер, Очерки..., էջ 56, 57։

[80] B. Schulz und Winnefeld, նշվ. աշխ., հատ. 1, տախտ. 22։ Michel Harriz, Baalbek, Beirut, 1972, էջ 63։

[81] Hermann Stiller, Königliche Museen zu Berlin Altertümer von Pergamon, Berlin, MDCCCXCV, B. V_2 Tafeln, տախտ. XVI։

[82] Н. И. Брунов, Очерки по история архитектуры, т. II, М., 1935, էջ 250, 300։ И. Ф. Бородина, Архитектура ахеменидского периода, «Всеобщая история архитектуры», т. I, М., 1971, էջ 306, նկ. 17։

[83] В. Л. Воронина, Архитектура парфян, «Всеобщая история архитектуры», т. I, էջ 322—323, նկ. 35, 37. Огюст Шуази, История архитектуры, т. I, М., 1936, էջ 131, 564։ W. Andrae, Die Ruinen von Hatra, Leipzig, 1908, I. Teil, էջ 12, նկ. 16, էջ 18, նկ. 30, տախտ. 10 և այլն։

«գիմնասիոն»-ի (ֆիզիկական վարժությունների շենքի) առանձին հատվածների ծածկի քարակերտ թաղը (մ. թ. ա. III դարի վերջ II դարի սկիզբ), Պրիենայում՝ քաղաքային շուկայի մուտքի քարակերտ թաղակապ ծածկը (մ. թ. ա. II դարի կես)[84] և այլն։

Նշվում է, որ Հռոմում առաջին սեպաձև կամարի երևան գալը վերաբերում է մ. թ. ա. IV դարին։ Մ. թ. ա. II դարում կամարաթաղային (арочно-сводчатая) կոնստրուկցիան, բետոնի հետ միակցված, երևան է գալիս տարածական-ծավալային համեմատաբար մեծ մասշտաբի կառուցվածքներում[85]։

Առաջին դարում թաղային կոնստրուկցիաները լայն կիրառում են գտնում արդեն մոնումենտալ խոշորագույն շինություններում՝ Տիտոսի թերմը (80 թ.)[86], Կոլոսեոնի ամֆիթատրոնի ներքին հորինվածքի թաղերը (75—80 թթ)[87] Հռոմում և այլն։

Պանտիկապեյում (Սև ծովի հյուսիսային ափեր) մ. թ. ա. I դարում դամբարանային կառուցվածքների ծածկերի իշխող ձևը եղել է գլանաձև քարակերտ թաղը[88]։

Կամարաձև բացվածքի (մուտք, խորշ) և թաղի (коробовый свод) գաղափարը Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել դեռևս ուրարտական ժամանակներից (Թոփրախ Կալեից գտնված բրոնզե թերթիկի[89] վրայի եռահարկ շենքի կամարաձև մուտքերը, Վանա ժայռի հյուսիսային լանջի 2,60×8,19 մ և 2,80×6,50 մ չափերի կամարաձև մեծ (2,30; 2,20 մ) խորության խորշերը[90], Վանա ժայռի հավանաբար պաշտամունքային նշանակություն ունեցող՝ այսպես կոչվող «Նաֆտ-կույուի» և «Իշկալայի» ժայռափոր դահլիճների թաղակապ առաստաղները)[91] և այլն։

Կամարաձև (երկկենտրոն) վերջավորությամբ մուտքեր և խորշեր գոյություն ունեն Էրեբունիի կրակի փոքր տաճարում[92]։ Քարակերտ թաղ ունի Հայաստանին անմիջապես հարևան Մցխեթայի դամբարանային շինությունը (I դարի վերջ)[93]։ Ուրեմն թաղային կոնստրուկցիաների կիրառումը, սկսվելով հեռավոր անցյալից, արդեն մ. թ. ա. I դարից և հատկապես մ. թ. I դարից երևան է գալիս տարբեր նշանակության կառույցներում. ընդ որում, ելնե-

---

84 «Эллинистическая техника», Сборник статей, М.—Л., 1948. М. П. Максимова, Строительная техника, էջ 79—80, նկ. 12, 13, 14։

85 И. С. Николаев, Строительные материалы, Строительная техника и конструкция, տե՛ս «Архитектура римской республики», «Всеобщая история архитектуры», т. 2, М., 1973, էջ 422—423, նկ. 6։

86 Чарльз Камерон, Термы Римлян, М., 1939, էջ 28—29, տախտ. VII а, VII в, VIII. В. Д. Блаватский, Архитектура древнего Рима, էջ 6։

87 John B. Ward-Pirkins, նշվ. աշխ., էջ 90—94։ В. Д. Ьлаватский, Архитектура древнего Рима, էջ 66—73։

88 Н. П. Сорокина, Архитектура античных государств северного Причерноморья, «Всеобщая история архитектуры», т. 2, էջ 384։

89 Ernst Herzfeld, Archaeological History of Iran, London, 1935, էջ 36, նկ. 8։

90 И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 237, տախտ. XXIX, XXX, XXXIV, XXXV.

91 Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959. էջ 208, 211, նկ. 60, 62։

92 К. Л. Оганесян, Арин-Берд I, Ереван, 1961, էջ 109, նկ. 53։

93 Н. Ш. Джанберидзе, И. Н. Цицишвили, Архитектура Грузии, М., 1976, էջ 31, նկ. 24։

լով յուրաքանչյուր երկրի շինանյութերի և ժամանակի կառուցողական տեխնիկայի ընձեռած հնարավորություններից, այն լինում է կամ աղյուսաշեն. կամ հիմնականում բետոնից, կամ քարակերտ։

Ալսպիսով, Գառնիի տաճարի ամբողջ կառուցվածքը (Վիտրուվիոսի ու նրա ժամանակաշրջանին բնորոշ օրդերային համակարգ, նույն ժամանակաշրջանին հատուկ տաճարի հիմնական մասերի կառուցողական սկզբունք, ոճական առանձնահատկություններ, շինարարական տեխնիկա) ցույց է տալիս, որ տաճարի տարածական-ծավալային ամբողջ հորինվածքը իր բոլոր մասերի կոնստրուկտիվ լուծումներով ու կառուցողական սկզբունքով ընդգրկվում է հատկապես մ. թ. ա. I դարի երկրորդ կեսից մինչև մ. թ. I դարի վերջն ընկած ժամանակահատվածի կառուցվածքների շրջանակի մեջ։

Արդ տեսնենք, թե այդ ժամանակաշրջանի որ հատվածում էր հնարավոր նրա կառուցումը։

Գառնիի տաճարը չէր կարող կառուցվել մ. թ. ա. I դարի երկրորդ կեսին, որովհետև, ինչպես իրավամբ նշում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, դա «...Արտաշեսյան թագավորության խռովահույզ և երերուն»[94] շրջանն էր։

Արտավազդ II թագավորի (մ. թ. ա. 55—34 թթ.) օրոք երկրում հաճախակի կրկնվող պատերազմները, այնուհետև միմյանց հաջորդող թագավորների կարճատև իշխանությունների անկայուն ժամանակաշրջանը և ապա Արտաշեսյան հարստության անկումը (մ. թ. 1 թվական)[95] աննպաստ էին նման շինարարության ձեռնարկման համար։

Գառնիի տաճարը չէր կարող կառուցվել նաև մ. թ. I դարի առաջին կեսին, որովհետև Արտաշեսյան հարստության անկումից հետո երկիրն ապրում էր ծանր, ոչ կայուն, երբեմն ուղղակի անտերունչ շրջան. հինգ տասնամյակի ընթացքում հայկական գահի վրա կարճ ժամանակամիջոցներով միմյանց են հաջորդում մեկ տասնյակից ավելի օտարազգի դրածոներ[96]։ Այնուհետև՝ հռոմեացիների և հայ-պարթևական զորքերի միջև տեղի ունեցած տասնամյա պատերազմ, հայկական քաղաքների ու շեների ավերածություններ, տնտեսական ծանր վիճակ։

Նման շինության իրականացման համար անհրաժեշտ պայմաններ կարող էր ստեղծվել I դարի երկրորդ կեսին, երբ «Հայաստանում վերջնականապես հաստատվում է Արշակունիների հարստությունը... Արևելքում հաստատվեց լիակատար խաղաղության տևական մի շրջան»[97]։

Այս հարցերի պարզաբանման վրա որոշակի լույս է սփռում Գառնիում գտնված հունարեն արձանագրությունը, ուր հաղորդվում է Տրդատ թագավորի գահակալության 11-րդ տարում տեղի ունեցած շինարարության մասին։

Արձանագրության թարգմանությամբ զբաղված գրեթե բոլոր մասնա-

---

94 Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, էջ 20։

95 Գ. Խ. Սարգսյան, Հայաստանը Արտավազդ Բ-ի և նրա հաջորդների ժամանակաշրջանում, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, Երևան, 1971, էջ 603—634։

96 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. 1, Երևան, 1944, էջ 313, 355։ Ս. Տ. Երեմյան, Մեծ Հայքի պայքարը անկախության համար Արտաշեսյան դինաստիայի անկումից հետո, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, էջ 710, 721, 725։

97 Ս. Տ. Երեմյան, Տասնամյա պատերազմը հռոմեացիների և հայ-պարթևական զորքերի միջև, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, էջ 764։

գետները (Ստ. Լիսիցյան, Աշ. Աբրահամյան, Կ. Տրևեր, Բ. Առաքելյան, Գ. Սարգսյան, Հ. Բարթիկյան և արձանագրության առանձին հարցերին անդրադարձած Ս. Կրկյաշարյանը) արձանագրությունը վերագրում են Տրդատ I-ին (66—88 թթ.), իսկ Հ. Մանանդյանը՝ Տրդատ III-ին (298—330)։

Արձանագրության վերծանումները բաժանվում են երեք խմբի. ըստ մեկի այնտեղ նշվում է միայն տաճարի (կառուցման կամ վերակառուցման), ըստ երկրորդի՝ ամրոցի, ըստ երրորդի՝ ամրոցի ու նրա ներսում գտնվող ինչ-որ կառույցի (ագարակ, տաճար, ապարանք) շինարարության մասին։ Այն հեղինակները, ըստ որոնց արձանագրության մեջ հիշատակվում է միայն տաճարի կառուցման մասին, ենթադրել են, որ արձանագրության քարը պատկանում է տաճարին. այնինչ այն ագուցված է եղել ամրոցի պատի վրա, հայտնի է նույնիսկ նրա հավանական տեղը։

Անկախ վերծանությունների տարբերություններից, բոլոր դեպքերում մենք ունենք Գառնիում կատարված կառուցումների վերաբերյալ Տրդատ թագավորի անվան հետ կապված շինարարական արձանագրություն։

Պրոֆ. Կ. Տրևերը, քննության առնելով արձանագրության ժամանակի հարցը, գրում է. «Համադրելով մեր արձանագրության տառերի ուրվագիրը փոքրասիական և սիրիական հարևան շրջանների մեծ քանակությամբ թվագրված արձանագրությունների հետ, գալիս ենք այն եզրակացության, որ Գառնիի արձանագրությունը մոտ է մ. թ. I դարի արձանագրություններին»։ Ապա նա համեմատելով «...և՛ գտնման վայրով, և՛ տառերի ուրվագրերի ժամանակով առավել մոտ» Արմազիի հունարեն արձանագրության (II դարի սկիզբ), Կերչի տապանաքարերի արձանագրությունների (առաջինը՝ 14—15 թթ., երկրորդը՝ I դարից ոչ ուշ) հետ, վերլուծելով պատմական դեպքերն ու մատենագրական վկայությունները, գտնում է, որ «Գառնիի արձանագրությունը անվիճելիորեն վերաբերում է Տրդատ I-ի ժամանակին, մ. թ. 77 թ.»[98] (ընդգծումը իմն է—Ա. Ս.)։

Այս տեսակետից ուշագրավ է Գառնիում կատարված շինարարության վերաբերյալ Մովսես Խորենացու հանրահայտ վկայությունը։ Խոսելով քրիստոնեական կրոնի ընդունման վաղ շրջանում Գրիգոր Լուսավորիչի որդի «Արիստակեսի Նիկիայի ժողովից վերադառնալուց հետո»[99] տեղի ունեցած դեպքերի մասին, նա գրում է. «Այս ժամանակները Տրդատն ավարտում է Գառնիի ամրոցի շինությունը տաշած որձաքարի վեմերով, որոնք ագուցված էին երկաթե գամերով և կապարով. նրա մեջ շինում է հովանոց՝ արձաններով, սքանչելի դրվագներով և բարձրաքանդակներով, իր խոսրովիդուխտ քրոջ համար և նրա վրա գրում է իր հիշատակը հունարեն գրերով»[100]։

Նշանակում է, Գառնիի ամրոցը և նրա ներսում շինարարական նույն տեխնիկայով ստեղծված «հովանոցը (իմա՝ տաճարը—Ա. Ս.) արձաններով, սքանչելի դրվագներով և բարձրաքանդակներով» համարվում են IV դարի առաջին քառորդից հետո ավարտված գործեր. մի բան, որ լիովին բացառ-

98 К. В. Тревер, Очерки..., էջ 196—197, 205։

99 Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, էջ 9, 16։ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 13։

100 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1961, գիրք երկրորդ, գլ. Ղ, էջ 256։

վում է։ Նախ՝ ըստ Տակիտոսի վկայության Գառնին իբրև անառիկ ամրոց գոյություն ուներ դեռևս 51—52 թթ.[101], երկրորդ՝ IV դարում կիրառվում էր շինարարական բոլորովին այլ տեխնիկա (պատերը կառուցվում էին կրաշաղախով)։

Կասկածից վեր է, որ Խորենացու նկարագրած շինարարությունը չի կատարվել Տրդատ III թագավորի օրոք։ Եվ այդ հարցին անդրադարձած գրեթե բոլոր մասնագետներն իրավացիորեն այն տեսակետն են հայտնել, որ Խորենացու մոտ հիշատակված շինարարությունը կատարվել է ոչ թե Տրդատ III-ի, այլ Տրդատ I-ի ժամանակ[102]։

Անկախ նրանից, Գառնիի ամրոցի պատի վրա փորագրված արձանագրության մեջ «տաճար» բառը կա թե չկա, ինքնին կարևոր է այն փաստը, որ հաղորդվում է Տրդատ թագավորի անվան հետ կապված՝ նույն ամրոցի շինարարության մասին։

«Կարելի է վստահորեն ասել,— գրում է պրոֆ. Կ. Տրևերը,— որ Մովսես Խորենացին մեզ հաղորդում է Գառնիում Տրդատի այն նույն շինությունների մասին, որոնց մասին պատմվում է Գառնիի արձանագրության մեջ»[103]։

Անտարակույս, Խորենացու հիշատակած «Գառնիի ամրոցի... տաշած որձաքարի վեմերով... երկաթե գամերով և կապարով» Տրդատ թագավորի օրոք կատարված շինարարությունը նույն այն շինարարությունն է, որի մասին հաղորդում է նույն ամրոցի պատի վրա եղած Տրդատ I-ի հունարեն արձանագրությունը։

Նշանակում է, Գառնիի հունարեն արձանագրությունը հաստատում է Գառնիի ամրոցի պաշտպանական համակարգում տեղի ունեցած շինարարության վերաբերյալ Խորենացու վկայության իսկությունը։

Քանի որ Գառնիի ամրոցի շինարարության մասին Խորենացու վկայությունը ստույգ է, ապա ավելի քան տրամաբանական է նշմարիտ համարել նաև նույն վկայության շարունակությունը կազմող՝ ամրոցի շինարարության հետ շինարարական միևնույն տեխնիկայով ստեղծված «...արձաններով, սքանչելի դրվագներով և բարձրաքանդակներով» «հովանոց»-ի (տաճարի) կառուցման վերաբերյալ հաղորդումը։

Ուրեմն հռոմեական արշավանքների ընթացքում ավերածությունների ենթարկված ամրոցի վերականգնման ժամանակ կատարվել է նույն ամրոցի հնագույն սրբավայրի մնացորդների վրա ստեղծված այժմյան տաճարի կառուցումը։

Ամրոցի վերականգնումը տեղի է ունեցել Տրդատ I-ի թագավորության 11-րդ տարում, այսինքն մ. թ. 76-ին. նշանակում է, ըստ վիմագրական և մատենագրական վկայությունների, նույն ժամանակաշրջանի արգասիք պետք է լինի նաև տաճարի կառուցվածքը։

Այսպիսով, թե՛ տաճարի ամբողջ կառուցվածքի հիմքում ընկած հոնիական օրդերի ու օրդերային համանման համակարգերի համեմատությունը, թե՛

---

101 Тацит, Анналы, кн. XII, гл. 45, Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 19։

102 Թ. Թորամանյան, Նյութեր..., հատ. Ա, էջ 282, К. В. Тревер, Очерки..., էջ 209; Б. Н. Аракелян, Гарни I, էջ 8, 67; Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 25 և այլն։

103 К. В. Тревер, Очерки..., էջ 210։

շինության ճարտարապետական-կառուցողական արվեստի ու հարդարանքի վերլուծությունը, թե՛ հնագիտական ու վիմագրական նյութերը, թե՛ մատենագրական վկայություններն ու երկրում ժամանակին տեղի ունեցած պատմական իրադարձությունները ցույց են տալիս, որ Գառնիի անտիկ տաճարը կառուցվել է հնագույն սրբավայրի (թերևս հռոմեացիների արշավանքների ընթացքում կործանված) մնացորդների վրա, նույն պատերազմական գործողությունների հետևանքով ավերածությունների ենթարկված ամրոցի վերակառուցման ժամանակաշրջանում, այսինքն մ. թ. I դարի երկրորդ կեսին, ավելի ստույգ՝ 76 թ.։

ВРЕМЯ СООРУЖЕНИЯ АНТИЧНОГО ХРАМА В ГАРНИ

А. А. САИНЯН

(Резюме)

Предполагаемая в научной литературе датировка античного храма крепости Гарни колеблется в пределах более чем пятисот лет (III—II вв. до н. э.—IV в. н. э.). По своей общей композиции храм является периптером, который снаружи окружен колоннами римско-ионического ордера. Следовательно, в основе всего сооружения лежит каноническая система ионического ордера.

Если материалом трактата Витрувия были античные памятники до I в. до н. э., то для теоретиков архитектуры итальянского Возрождения предметом изучения послужили аналогичные сооружения всей античной эпохи. Поэтому определенные отличия ордерной системы памятников послевитрувианской эпохи от ордерной системы сооружений, созданных до I в. до н. э., послужили основанием для того, чтобы отдалиться от канонических пропорций отдельных частей витрувианского ордера. Между тем системы ионического ордера Витрувия (I в. до н. э.) и храма Гарни почти в точности совпадают.

Сравнительный анализ пропорций систем ионического ордера гарнийского храма, Витрувия, теоретиков архитектуры Возрождения (Альберти, Серлио, Виньолы, Палладио) и в особенности анализ архитектурно-строительного искусства и орнаментики гарнийского храма (как и исторических событий, эпиграфических и археологических материалов) показывают, что античный храм крепости Гарни построен во второй половине первого века н. э., точнее—в 76 г.